

ՄԱՍՆԱԴՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՐԱ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՈՒՌԻԶՈՒԹԻՒՆ ԼԻՈՆԻ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիւ Տ. Ներսէս արքեպս. Պոզապալեանի արտօնութեամբ եւ Գերագոյն Դոգեւոր Խորհուրդի Յուլիս 22 1999 թ. ժողովի որոշմամբ, եւ Բարձրաշնորհ Տ. Գիւտ արքեպս. Նազաշեանի բարեհաճ կարգադրութեամբ եւ ձեռամբ Դայրապետական Պատուիրակի Փոխանորդ Միքիմ Ֆրանսայի Դայոց՝ Գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Ձաքարեանի, տեղի ունեցաւ Վարդապետական իշխանութեան տուուչութիւն:

12 Սեպտեմբեր 1999 թ. Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Սուրբ եւ անմահ Պատարագ Խաչվերացի տօնին առթիւ: Պատարագիչն էր Նորվան Սրբազան: Պատարագի աւարտին Գերաշնորհ Սրբազանը յատուկ արարողութեամբ մասնաւոր Վարդապետական իշխանութեան չորս աստիճաններ շնորհեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիտասարդ միաբան եւ Սենթ Էթիենի հոգեւոր հովիւ Դոգեշնորհ Տ. Տաթև արքեպս. Յակոբեանին՝ խարտաւիլակութեամբ Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Պէքճեանի: Այս առթիւ եկեղեցւոյ մէջ ներկայ հասարակութեան իր խօսած քարոզով պատարագիչ Սրբազանը բացատրեց վարդապետական չորս աստիճաններու իմաստն ու արժէքը, ընդգծեց նաեւ, թէ այս գնահատականը ե՞րբ եւ ի՞նչ պատճառով կը տրուի:

Արդարեւ 9 Սեպտեմբերին Դոգեշնորհ Տ. Տաթև արքեպս. Լիոնի «Էնսթիթիւ Քաթոլիկ» Աստուածաբանական համալսարանի հայագիտական բաժնի քննիչ յանձնախումբի առջեւ պաշտպանած էր իր վարդապետական թեզը, որուն միւթն էր «Մատաղը Դայ Աստուածաբանութեան մէջ»: Յանձնախումբի անդամներն էին՝

1. Գերշ. Տ. Նորվան եպս. Ձաքարեան,

2. Փրոֆ. Գրիգոր Պըլտեան (դասախօս Լիոնի «Էնսթիթիւ Քաթոլիկ» համալսարանի),

3. Սահակ սրկ. Սուքիասեան (դասախօս Դայերէն լեզուի «ժան Միլլէն» համալսարանի):

Քննիչ յանձնախումբը, ներկայութեամբ ստուար բազմութեան, լսելէ ետք թեկնածուի յաջող պաշտպանութիւնը, գայն գնահատեց «քաջալաւ»:

Յատուկ տուուչութեան հոգեպարար արարողութեան ընթացքին կարդացուեցան չորս Աւետարաններ եկեղեցւոյ չորս կողմերուն մէջ եւ որուն ընթացքին վարդապետական գաւազան եւ քարոզելու եւ ուսուցանելու իշխանութիւն տրուեցաւ Դայր Սուրբին, ինչպէս որ կը վկայուի 15-րդ հարու հայ

եռամեծար վարդապետ եւ ունեցչապետ Գրիգոր Տաթևացիի ձեռնադրութեան Մաշտոցին մէջ:

Սրբազանը իր քարոզի աւարտին անգամ մը եւս շեշտեց, որ Աստուած անսասան պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եւ առաւել պայծառացնէ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին, անոր ծոցին մէջ աւելցնելով որակաւոր վարդապետներու թիւը, որոնց վրայ այսօր աւելցաւ Դոգեշ. Տ. Տաթև Վարդապետ Յակոբեանի անունը:

Եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեան իրենց մաննակցութիւնը բերին նաեւ «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Պրմ. Յովհաննէս Պէրպէրեանի, եւ տուուչութեան արարողութեան շարականներու երգեցողութիւնը կատարեց Էդուարդ Դաւիթեանը:

Եկեղեցական արարողութենէն յետոյ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ «Կարալիս Մանուկեան» սրահին մէջ տրուեցաւ ընդունելութիւն մը՝ կազմակերպուած Սենթ Էթենի եւ Լիոնի եկեղեցաւեր տիկնանց կողմէ:



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՇՆԱՐՀ Տ. ՏԱԹԵՎԱՐԴԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Ծնած է 1966 Յուլիս 7-ին Իրաքի Մուսուլ քաղաքին մէջ: Նախնական ուսումը ստացած է Պաղտատի հայոց «Թարգմանչաց» Վարժարանին մէջ: 1979 թուականին միջնակարգ ուսումը աւարտելէ ետք, նույն թուականին